

Հաջողության գրավականը

Վալերիկ Մուրադյանը ծնվել է 1958թ. Նաիրիի շրջանի Քանաքեռավան գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է բանակ: Ծառայել է դեսանտային զորամասում: Բանակից հետո էլ շարունակել է զբաղվել պարաշյուտային սպորտով եւ դարձել է վարպետության թեկնածու: Միաժամանակ աշխատել է գյուղատնտեսության բնագավառում: 1988-ին բոլորի պես ոգեւորվել եւ ակտիվորեն մասնակցել է ղարաբաղյան շարժմանը: 1989-91թթ. գյուղի ջոկատի կազմում մասնակցել է սահմանների պաշտպանությանը: 1992թ. մայիսի 9-ին, մտնելով դեռեւս ծխացող Շուշի, որոշել է մնալ այնտեղ: Անդամագրվել է Ժիրայրի հրամանատարությամբ գործող կամավորական գումարտակին, որի կազմում մասնակցել է Մարտակերտի եւ Աղդամի շրջանների ուղղությամբ բազմաթիվ մարտերի: Հովտաշեն գյուղի համար մղված կռվի ժամանակ ցնցակաթված է ստացել եւ երեք ամսվա բուժում ստանալուց հետո կրկին վերադարձել է գումարտակ: Հրադադարի հաստատումից հետո, 1995թ., Վալերիկը ծառայության է անցել Ներքին գործերի համակարգում, սակայն կարճ ժամանակ անց թողել է ոստիկանական աշխատանքը եւ կրկին նվիրվել հայրենիքի պաշտպանությանը: Երբ Վալերիկի հետ խոսում էինք հայրենիքի պաշտպանությանը մասնակցած տղաների մասին նա հիշեց հանրահայտ Պետրոյին եւ Դուշման Վարդանին:

- Այս երկու հզոր անհատները շատ մեծ տպավորություն են թողել ինձ վրա,- ասաց նա,- ոչ միայն հայրենասեր էին եւ շատ քաջ, այլեւ չափազանց համեստ էին, հարգանքով էին վարվում բոլորի հետ, ամենադժվարին առաջադրանքների իրականացումը վերցնում էին իրենց վրա, նրանք ինձ համար օրինակելի զինակիցներ ու հրամանատարներ էին:

- Ինչո՞ւ որոշեցիր ծառայությունը շարունակել բանակում,- հարցրեցի նրան:

- Այստեղ ամեն ինչ շատ ավելի մաքուր է,- ասաց,- բացի այդ ավելի մեծ գործ, քան հայրենիքի պաշտպանությունն է, չի կարող լինել:

Վալերիկի խոսքերը ինձ մի քիչ վերամբարձ թվացին, բայց նրա հետ հետագա զրույցից հասկացա, որ բոլորովին էլ այդպես չէ, եւ ես գործ ունեմ չափազանց ազնիվ եւ կիրթ մի անձնավորության հետ. զորամասի հրամանատարը լավ գիտեր, թե ում հետ է ինձ ծանոթացնում:

- Բանակը հանգստյան տուն չէ,- ասում է Վալերիկը,- դժվար վարժանքն է հաջողության գրավականը, այս բանը ես միշտ հիշեցնում եմ իմ մեծ տղային՝ Զոհրաբին, որն արդեն մեկ տարի է, ինչ ծառայում է բանակում: Պարզվեց, որ տղան ծառայում է իրենից բավականաչափ հեռու, եւ հայրը որդուն տեսության գնալու ժամանակ էլ չի ունենում:

- Ինչ անենք, ծառայություն է, այսպես էլ է ստացվում:

Վալերիկը հայտնեց նաեւ, թե իր մեծ ցանկությունն է, որ եւ Զոհրաբը, եւ կրտսեր որդին՝ դպրոցական Արսենը, զինվորական կրթություն ստանան, դառնան ազգային բանակի սպաներ: Համոզված ենք, որ այդպես էլ կլինի, կկատարվի հայրենիքի զինվորի ցանկությունը:

Ա.Հ.